

ՄՈՒՐՁԻ ՄԻ ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ ԱՌԹԻԻ

Խմբագրութիւնս ստացել է տպագրութեան համար հետեւեալ գրութիւնը:

19 մարտի 1899, Աստրախան.

Յարգոյ Խմբագիր!

«Մուրճ»-ի տարւոյս չունեալի համարում կարդալով պ. Ա. Ա. գրախօսականը «Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութեան» մասին՝ հարկ եմ համարում սոյն նամակով ուղղել աչն մի քանի սխալներն, որոնք թույլաբար եմ նորա կողմից:

1. Գրախօսն ասում է, որ իբր թէ փշեալ գրքի մէջ վերապատմած և նոյն իսկ արտադրած է պ. Նրիցեանի «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն» գրքից մի քանի տասնեակ էջեր (որես գրքի էջ 51—102 և չափկապէս էջ 70—102), աչն ինչ պ. Նրիցեանի գրածից փոխ առած կալ միմիայն 16 էջ, 70—94:

2. Աստուածաբանը եպիսկոպոսի սաներից մէկը, Արիստակէսը վարդապետ չէ ձեռնադրել: Նա Զմիւռնիայից ղնացել է Ալէքսանդրիա, իբրև աշխարհական և, ալը կոչման մէջ էլ մնացել է. դոնէ քննադատած գրքի մէջ չկալ որ և է հիմք ենթադրելու թէ նա ձեռնադրել է երբ և իցէ:

3. Թաղիաղեանցի մասին կարդած ծանօթութեան մէջ (էջ 99) ասւած է. «էջ 244-ի տողերից կարելի է եզրակացնել թէ հեղինակը կարծում է որ Թաղիաղեանցը Հնդկաստանից 1831-ին Նրեան և 1832-ին Էջմիածին վերադառնալուց լեռոյ՝ նորից ուղղակի Հնդկաստան վերադարձաւ. բաց դա սխալ է. մեզ չալփնի է որ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Աղանի Ստեփաննոսի ժամանակ (նա պատրիարք էր 1831—39 թ.) Թաղիաղեանցը Կ. Պոլսումն էր և ուսուցչութիւն էր անում»:

Մեզ միանգամայն զարմացնում են վերոորոշեալ խօսքերը. 244 երեսում մենք միայն ալս ենք ասել «Թէ ալս վերադարձից լեռոյ Մեսրոպը Երբան ժամանակ է մնացել Էջմիածնում և երբ է հեռացել—չգիտենք», և միթէ ալս տողերից կարելի է եզրակացնել թէ մենք կարծում ենք, որ Թաղիաղեանցն Էջմիածնից 1832 թւին ուղղակի Հնդկաստան է վերադարձել: Թէպէտ և ալըպէս ասելով՝ աւելի հիմնական կարծիք չալտնած կը լինէինք քան պ. գրախօսը, որ կամենում է ասած լինել, թէ Թաղիա-

դեանցը Էջմիածնից նախ Պոլիս է գնացել, Նթէ պարոնին չալոնի աղբիւրն, որի վրայ հիմնուած է, Յովհաննէս քահանայ Մկրեանի կազմած կենսագրութիւնն է, պարզ է ուրեմն, որ ալդ խօսքերով նա մեղանշում է և աղբիւրի դէմ Յիշեալ կենսագիրն, ընդհակառակն, կարծում է որ նա, Թաղիադեանցը Էջմիածնից ուղղակի Նոր Զուղա է գնացել (էջ 91) և ոչ կ. Պոլիս, որ եկել է միայն 1838 թւին. «Մեսրոպը կը ժամանէ ի կ. Պոլիս լամին 1838 մալիս ամսուն, որ արեւն պարրիարք Լր Տէր Ստեփաննոս... վերաձախեալն Աղանի» (էջ 98):

Աւստի վերջացնում ենք մեր խօսքը. ըստ որում չենք կամենում կանգ առնել պ. գրախօսի մի քանի սխալ հալեացքների և անճիշտ ըմբռնումների վերաւ. դորա մասին կալ ընթերցողների դատաստան.

Ա. Ե.

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Նամակագրի դիմումը «ընթերցողների դատաստանին» ընդդիմախօսի կողմից լուծեան տրած կէտերի վերաբերմամբ նախ ենթադրել է տալիս աչն թէ, Ա. Ե.-ի կարծիքով, ալդ «մի քանի սխալ հալեացքները և անճիշտ ըմբռնումները» իբր թէ աչնքան ակնյալոնի են որ ամեն ընթերցող կը նկատի. և ապա «ընթերցողների դատաստանին» դիմելը «անյայտ» թողած կէտերի վերաբերմամբ զգացում է իբր մի արեւրաձգութիւն դրախօսի ոչ միայն հասկացողութեան ալ և բարեխղճութեան վրալ: Գրականութիւնը աղպիսի լախուռն պարսաւներ չի սիրում. բալց ալդ հանգամանքը սորպում է մեզ աւելի երկարաբան լինել: Շտապում ենք անցնել մեզ առաջադրած երեք չալոնի կէտերին:

Կէտ 1: Մեր գրախօսականի մէջ, վերաբերեալ պ. Ներցեանի գրքից փոխառնելուն, ծանրութեան կէտը դրած էր աչն բանի վրալ, որ Շահխաթունեանցի կենսագրութեան համար, մեր կարծիքով, հարկ չկար պատմել իւր բոլոր ընդարձակութեամբ աչն իրողութիւնները, ուր Շահխաթունեանցը անձնապէս երկրորդական դեր է կատարում՝ կամ բնաւ դեր չի կատարում, հետեապէս շեղումներ են և ոչ բուն առարկային (Շահխաթունեանցի կենսագրութեան) վերաբերող, մանաւանդ որ ալդ իրողութիւններից ոմանք արդէն յայտնի են պ. Ներցեանի Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն գրքից: Արիտապէս և պիտիպոսը, ուրեմն, նկատում էինք մենք, ոչ միայն շեղումներ է անում, ալ և ալդ շատ ընդարձակ շեղումների մէջ պատմում է մի ալ հեղինակի գրքից արդէն յայտնի իրողութիւններ: Ահա մեր գրած և Ա. Ե.-ի ակնարկան փողերի գլխաւոր իմաստը: Եւ ամենից առաջ պէտք էր իմաստից բռնել: Մեր գրածի իմաստը կը պարզէր, Ա. Ե.-ին աչն, ինչ որ բաւականաչափ որոշ էր վերը ակնարկած փողերի մէջ: Սակայն ահա մեր խկական խօսքերը: